Տեղեկանք գործող օրենքի
փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 10. Անտառների դասակարգումը՝ ըստ հիմնական նպատակային նշանակության

1. Հայաստանի Հանրապետությունում անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության՝ դասակարգվում են՝

ա) պաշտպանական նշանակության.

բ) հատուկ նշանակության.

գ) ~~արտադրական նշանակության~~:

սոցիալական նշանակության (սանիտարահիգիենիկ, առողջարարական, ռեկրեացիոն)

Ըստ հիմնական նպատակային նշանակության՝ անտառների դասակարգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ոչ պետական անտառների նպատակային նշանակության փոփոխման դեպքում պետության կամ համայնքի կարիքների համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփականատիրոջը փոխհատուցվում են պատճառված վնասները և կորուստները, եթե անտառների նպատակային նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ չի փոփոխվում:

Հոդված 11. Պաշտպանական նշանակության անտառները

1. Պաշտպանական նշանակության անտառներ են՝

ա) ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները.

բ) ~~բարձր թեքության (30 աստիճանից ավել) վրա գտնվող անտառները.~~

լեռնային կամ 1-ին կամ 2-րդ խմբի անտառները.

գ) անտառների վերին և ստորին սահմանների 200 մետր լայնությամբ տարածքը.

դ) կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային գոտիներում աճող անտառները.

ե) բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով:

2. Պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը:

3. Պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: